ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ-ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 4 - Լ

«29» 02 2024 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ-ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 15-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 21-րդ հոդվածի 1-ին մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը, ինչպես նաև 34-րդ հոդվածի 1-ին ու 2-րդ մասերը ու ղեկավարվելով Ներքին գործերի նախարարի 2023 թվականի մարտի 14-ի թիվ 5-Լ հրամանով հաստատված ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության կանոնադրության 22-րդ կետի 4-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. ՀՀ ներքին գործերի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատելու և փրկարար ծառայության տնօրենի 2020 թվականի մայիսի 22-ի թիվ 17/587-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 15-Լ հրամանի 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «1.1», «1.2» և «1.3» կետերով.

«1.1 ՀՀ ՆԳՆ ՓԾ քաղաքացիական պաշտպանության վարչության քաղաքացիական պաշտպանության պլանավորման բաժինն» անվանափոխել «Քաղաքացիական պաշտպանության կազմակերպման բաժնի»:

1.2 Դադարեցնել ՀՀ ՆԳՆ ՔԾ քաղաքացիական պաշտպանության վարչության մարտական պատրաստության և ուսուցման կազմակերպման բաժնի ու Զորահավաքային նախապատրաստության բաժնի գործունեությունը:

1.3 Ստեղծել ՀՀ ՆԳՆ ՔԾ քաղաքացիական պաշտպանության վարչության քաղաքացիական պաշտպանության հարցերով կառավարման մարմինների գործունեության համակարգման բաժին:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Հրամանը հայտարարել ըստ առնչության:

Փ/Ծ ԳՆԴԱՊԵՏ **հաստատված է էլեկտրոնային ստորագրությամբ 29.02.2024թ.** **Կ. ՑՈՒՑՈՒԼՅԱՆ**